



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հիշատակ Բարձրագույն Գործարար

ԳԱՂԹԱԿԱՆ



ԼԵՆ

391

891.99-3

Կիսակա խառն անթրոպոլոգիա

ԳԱՂԹԱԿԱՆ

[պատմություն]

2038.



Ս. ՊԵՏԵՐՍԲՈՒՐԳ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ի. Ն. ՍԿՐԻՊՈՒԴՈՎԻ
1888.

Дозволено цензурою. С.-Петербургъ, 28 января 1888 года.

28.394

4391-60

Типография И. Н. Свороходова (Надеждинская, № 39).

Ա. *).

Իմ անուշ տղեքներ, կ'ասէք, թի քրդեր կը թաղեն, կը սպանեն ձեզ, թի վաշխառուներ մէկ փարա բխօ չին թողնիր մընջ ձրը ձեռին, թի դուք էլ ու ձեր քուլճաթն էլ անօթի էք.....

Առկէք թողնիլ մըր անուշ օլաթ ու թօլաթ, ու մընջ օտար ու անձանց երկրին մըշկութին ու ռաթութին փնտռել..... Ախ, անուշ տղեքներս, ականջ դրէք ինձ. ես խալիփօրցեր եմ—անդրցէք ինձ, մի թողնիք ձեր վօթան.....գիտցէք, օր մըր խողի վիրէն չոր ու կռկռուկ խացի բրդուճ մի էվէլի աղէկ աս ու խամով՝ խընջ շատ տեսակ էմկներ մընջ օտար երկրին.....թի կուզէք, զրսա էնիմ ձեզ, թի խմալ երբ ես ջէլ էի, թողի զիմ կին, զիմ աղջիկ, զիմ վօթան ու օտար երկիր գացի.

*) Սոյն գրքոյի վերջում տպուած է փոքրիկ բառարան մը որտեղ որ գրականական լեզուի են թարգմանուած այն բառերը, որոնք յատուկ լինելով միայն Աշոյ բարբառին, անհասկնալի կը լինին Ռուսացոյց համար:

տեսնինք թի՛ ի՞նչ կղաւ, թի՛ դարձաւ յիմ՝
ղլուխ.....:

—Ղըստ էրա, Մարկոս պապա, զըստ է-
րա օր լսինք.....:

—Ղէ՛ տղէ՛ք, ահա՛նջ էրէք:

Մարկոս պապան մօտխրացաւ ի կրակ, ու
էնոր չորս բոլոր նստեր ին ինք ու մէկ քանի
էլ ջէլ ու ջիւհան մարդիք ու տղեքներ. դուրս
կիսան իւր պղտիկ խողէ ջիւրուխ, էլից զէն
թութունով, կրակ եղիր վիրէն, ու ծուխն ա-
մուր ամուր ծըծքելով, էսպէս էկաւ զըսէն:

Բ.

Էս օրից քսան, դուք ասէք բոսուն տարի
առէջ, մընջ էսա գեղին ես ու իմ աղբէր Պե-
տոն կապրինք, մըր խէրն ջիւս շատոնց զարե
առւիր էր ձեզես կարգուիր ի, աման աղ-
բէրս ազապ էր. պղտիկ տուն մը չէր. միր եղ-
ները, կովեր և գոմէշները (զի եղներ, կովեր ու
գոմէշներ էլ ունէինք), կարճ կապիմ, արտ ու

ափ էլ, մըր արտը մեղի չէր օղտիր, աման ի՞նչ
էնինք, էլման բաս էր... ..կը վարինք, կը ցա-
նինք, մըր ումին էլ օղորդմա օր թթուալ էր,
աման էլման մեղ ձեռք կուտէր, ու աղօթք կ'է-
նենք Աստծուն.....կըր ջօջաւ զիմ աղբէր, էն
էլ կուզէր կարգուել.....աման խրջար էղնի
ծուռ չէ Զօջունենց ասածը թէ՛ «Խորհուրդ
մարդկան, կամք Աստուծոյ.....»:

Աստծոյ սիրտ խանինք, ի՞նչ արինք,—չրմ
ղիտեր, օր մ'էլ մախ ընկաւ մընջ մեր գեղի
տավրին, ու մընջ մէկ շաբթուն, մարդ չկեր
օր չաքար իր մէկ կղան, կամ գոմշու, կամ
կովի խատելու հապով. շուքը Աստծոյ էն շա-
բաթ անդադա ընցուցինք, ու մըր տավրնե-
րուն ցաւ մը չէր քէսիր. յէր օր Աստուածն
էլ զիտեր զմըր խեղճութին, ու զիտեր օր բը-
լա մըր տավրին մըր բան բուրդ էր... ..ուրիշ-
ներ վարա ունին կամ սանաթ զիտին, մենք
մըր ձեռի ու մըր տավրի վիրէն ենք ու էնոնք
են մըր կէն ու չկէն,—եղներ դաշտ արծեղու
կը տանինք, կովերն էլ կը կթենք, ու եղ ու
պանիր կը շինենք:

Չերկարցնեմ, մախն վերցուիր էր մըր գեղէն, ու դուք էլ կրնաք խասկանալ, օր շատ ուրախացեր ենք մենք, օր ցաւու զօւ մը չէր քէսիր մըր անասուններուն. աման մըր ուրախութիւն քնաց մընջ մըր փօրուն.....ի՛նչ տեսնեմ, իրիկուն մը՝ երբ տուն գացի, տեսայ օր գուն ու կերպ չէ մացեր վըր իմ կրնկան:

— Ի՛նչ եղիր ա, խարցրի:

— Գնա՛, իշկէ՛, ասաց, զմըր տավիրներ, օր բան մի չքէսի էսոնց....: Օտաց վիրէն են, կը պօռան, ու իրենց բերնէն ջուր կը ճէվայ.....:

Ես շատ վախեցայ ու քամու պէս շուտ թռայ, գացի ի դոմ, մտայ ներս. տեսնեմ օր կնկանս զըստ արածին պէս ա.— օտաց վիրէն են եղներ, աչքերն պղտորեր ին, ոտներն կը դողդղան ու սուն չեն տար իրենց դաւախն.....: Ի՛նչ էնենք: Խաբար արինք մըխսի Յովկին, օր կը խասկանար տավրի ցաւից. էկաւ, իշկեց, ու մալուլ ու արտում երեսով դարձաւ աչքեց յիս: Մենք ջիս խասկացանք, օր տակն ենք գացեր. էլ Աստուծ խասնի մեզ:

Ե՛հ, էլ ի՛նչ երկարցնիմ, շաբաթ մի չէր

բոլոր, օր մէկիկ մէկիկ դուրս խանինք մըր տավրներու ջանդրիներ. Է՛, ի՛նչ տ'էնինք մկա. մըր մեռնիլ աղէկ էր խընջ էսա հալին տիրանալ: Գարուն էր. դաշտ տ'երթինք, աշխատինք, աման ինչով.....մէկ քանի օր անցաւ մէջտեղ. իրիկու մը նստիր ինք ես, կնիկս, աղբէրս ու տուշումիշ կ'եղնինք թի՛ ի՛նչ ճամբախ բռնենք.....:

Մէկ էլ տեսնես ներս մտաւ մըր քեռի Խաչօն, ու էն էլ զիտեր զմըր փեսաներ ու զմեր խեղճութիւն:

Նստանք. քիչ մը էստի էստի խօսք ու զրուց էրինք.....:

— Ի՛նչ էնինք մկա, քեռի՛ Խաչօ, ասացի:

— Ես էլ ջիս էնոր հապով եկայ մօտ քէ, օր խրատ տամ, թի ի՛նչ տ'էնիս: Ղէ՛, տկանջդ ինձ տուր:

Մըր տրկից Յովօին երկու մարդ պէտք ին, օր աշխատին մընջ էնոր բօստներուն.....գնա՛ խէտ քո աղբէր.....օղորդ ա, օր շատ վաստակ չկէ մընջ էս բանի, աման էլման աղէկ ա, յէր օր էվէլի աղէկ ա. օր մարդ քէն շատ բան մի

վաստկի, քան թի ձեռք դնի ծոց՝ նստէ.....
զնացէք, տղեքներ, օր մի՛ խանէք բէյխուզաւ:

Եւ յիմ տեղէն չլստացի, ու մտացս անցու-
ցի թի՛ աղէկ, միա երթանք աշխրտինք մընջ
բօստնին, փարա վաստկինք ու օր-բը-զօր ճա-
րենք մըր խացն. աման երբ ձմեռ դայ, ի՞նչ է-
նենք յէն օր:

Չէ՛, չէ՛. էվէլի աղէկ ա, քաղաք մի երթամ,
ու զլաւ բան ու գործ մի փնտռեմ ինձ:—Եւ
ըմտըրա տուշումիշ կ'եղնիմ, քեռիս էլման խօս-
քի սկսաւ ու խարցուց:

—Ե՛...յէ՛ր չես երթար մօտ բօստնջուն:

—Չէ՛, քեռի՛, ես չիմ ուզիր երթալ յէն
տեղ, օր քիչ մի բան ձօրով կ'ընինի յիմ ձեռք.....
ես հետեղ կերթամ կը բանեմ, օր բան մի ընկ-
նի լաղաթով յիմ ձեռք:

—Ե՛յ տղայ, մի՛ ընկնաւօրիր, քեզ ասաց
կասեմ, զնա՛ մօտ Խաչօին:

—Չէ՛, քեռի՛, ես չեմ երթար ի տեղ... մըր
տղեքներ՝ օր Թիֆլիսու եկիր ին, լսե՛ր ես
ինչ զըսա կ'էսեն.....կասեն թի՛ շատ Զօջ, շատ

բարաքաթով քաղաք ի, ու մշկութենն էլ տ-
ղէկ կանցնի յէն տեղ:

Շատ ու շատ հակաճառուանք ես ու իմ
քեռին. աման ափսոս, օր շատ գէշ ի ես, ու
իմ խեղք տեղ չէր էնիր.....ես յիմ մտաց կա-
սէի թի՛ Թիֆլիսն օր երթամ, մշկութին կ'է-
նիմ, մէկ երկու տարի կը տատիմ, բան մի ու
մարդ կ'եղնիմ, կ'երեւնամ, փարա էլ բօր: Եւ
էս մտքի վերէն ի, ու պինդ պինդ կը հակա-
ճառուէի խէտ իմ քեռուն:

—Ե՛հ, ի՛նչ էնիմ, դու դիտես, ասաց քեռի
Խաչօն, ու ծանտը արեւ մի քաշեց. թի՛ քո
միտքն էն ա, օր ինձ ահանջ չ'էնիս, քո մօւր
քո զլուխ. զնա՛, զնա՛, դու օր խողիդ դուզայ:

—Ե՛, կնիկդ ու աղէդ ի՞նչ կ'էնիս, դար-
ձաւ ասաց ինձ:

Եւ կէտին ցածացրի զիմ զլուխ:

—Ե՛ճապա չ'ե՞զնիր, օր դուք ձրը ձեռքի
տակ առնէք զէնոնք, չուր ես դառնամ դամ:

—Աղէ՛կ, ասաց քեռիս, ու էլ զբերան չե-
բաց:

Գ.

Մենք՝ շուտ մի խաղըրվանք, օր ճամբախ ընկնինք. մէկ մէկ խաստ բիր կտրեցինք մընջ զրոնին. մօրքոյրս մէկ մէկ խուռջին կտրեց մը-
զի, խացով ու պանրով էլեց.....էսո՞նք են մըր
ճամբու ըմէն բան:

Եկաւ էն օրը՝ օր ճամբախ տ'ընկնինք:

Եւ, ա՛, շատ աղէկ, շատ ու շատ աղէկ միտքս
կ'իգէ էն օրը՝ օր դուրս ընկանք մըր գեղէն.....
ի՛նչ լաւ օր էր: Արեւը շողցեր էր ու պօծառ
պօծառ կը փալփէր երկնքի երեսը..... մըր գե-
ղը հեռուէն կապուտ կապուտ կ'երևնար. խաւ-
քեր ծառերի ձղերու վրէն հաւքեր ին, ու
անուշ անուշ կը ձլվըլան. ասես թի՛ լեզու են
ելեր, ու կասեն. «Ե՛յ ծուռ, ա՛յ խելըրթափ
մարդիք, դո՞ր կերթաք, վի՛ր կը թողնէք ձըր
խօր ու պապկէ գերզման ու ոսկրներ»:

Եւ.....ախ.....օղորդման օր խելըրթափու ենք
մենք. յէ՛ր տուն չդառցանք յէնգախ:

Ճամբախ ձեռք տանք.... քէշէցինք օր մի,

երկու օր, երեք օր.....ի՛նչ զաղար դառն ու
կսկիծ է ճամբորդութին ու զարիպ ու զուր-
պաթ.....:

Մըր ճար կարաւ. շատ զօռ կ'իգէր ըմըլէ
մի քէլէլ ասիս թի՛ մէկ մէկ ամբեմ պալ դըր-
վուկ էր վի մըր սրտին. աման իրարու նշանց
չենք տար զմըր ներսի կոխնձկտելն, ու վի մըր
արևուն խանաքներ էլ կ'էնինք. աման ըմէնքս
էլ գիտենք մըր ներսէն, օր հաճբու կ'էնինք
էս անխամ խանաքներն:

Քանի՛ կերթանք ճամբախ՝ կը ծիրէր ու
վերջ չէր դար. դարնան դախն էր. ցերեկին ա-
րեւը շող էր ու կը տաքցնէր մեզի. բաթախ
տեղեր, սաղերն էլ իլի են ջրով, ու մենք քէ-
լիով կը ջրոտինք ու կը թացուին մըր շորեր.
իրիկուն կը ցրտէր. գիշերն էլ կը պաղնէր, ու
էնպէ՛ս ցուրտ կ'էնէր, օր աղամ աղման ձէն
կուտէր ու կը լկըրկէր մենք. շատ չ'ընցաւ,
երկու աղբէրս էլ մանք, ու դող բռնեց մըրգի.
ճամբախն ասիս, կ'երթինք ու մըր խողին կ'եղ-
նէր... է՛, է՛, քանի՛ քանի՛ անգամ կ'անի-
ծենք մենք զմըր գեղէն ելնելն:

Անցաւ մէկ շաբաթ, երկու շաբաթ ու ճօ-
րով-մօրով խառանք մենք ի Թիֆլիս. բայց ի-
մա՛ն խառանք.....պատառոտած, մեռելի պէս
գեղնած, քէսատ, յէմալ օր՝ մըր միս ու ոսկը
թողիր ին մէկզմէկ, մենք եղիր ենք կիսամեռ:
Գօ, ըմբըլա խառանք մենք ի Թիֆլիս, որ ջոջ
քաղաք մ'ա. շատ շատ ջօջ, տներ ջօջ ու սա-
րայ ին ասեռ. ճամբրներ լէն ու երկէն արա-
պէքն էլ իրարու ետեւ շուտ շուտ կը վազվը-
զնն, յէման օր գիտիս թի՛ մկա չէ մկա տակը
տի մնայ մարդ:

Գլուխներս դըմ գարձաւ, ու կայնանք ջօջ
տան մ'առէջ, մէկ էլ տեսանք, օր մարդ մի
տաքանջէն ի մէջք, թուրը կշտին, մօտխրացաւ
մըղի ու ստերէն բան խարցուցմենք՝ խօ՛,
հուհու, բան մի չենք խասկանար ստերէն. ա-
ման մարդը խաթրով խաթրով մըղի կը մօտ-
խրանայ:

— Եթանք, երթանք, ասացի աղբօրս, մենք
ի՛նչ ենք արէր օր ինչ տ'ուզայ մեզնէ էս մարդ:

Աման էս մարդը էլ սաբը չարաւ օր քիչ
մ'էլ առէջ երթանք մենք. յէմալ բշտեց մըղի,

օր մըր ոսկրներ մտաւ իր ձէն: Ա՛խ, ա՛խ, ինչ
էնիմ օր մընջ մեր գեղին չենք մենք, թի չէ՛
նըշանց կուտի հս էնոր թի՛նչ շան լաւոտ էր
էն, յէր օր օտար ի յէստիդ, ու մարդ ու մա-
ղաթ չի ճանչնար.....ղարխուր թի՛ն՝ չա՛ր գե-
րու թին.....:

Ես չըմ գիտիր թի՛ ի՛նչ զադար էմբըլա
պաշաբօշ տի մնանք.—կենք դէս ու դէն մէկ
էլ մըր բախտէն մշակ մ'ելաւ մըր դէմ, որ
մըր գեղացի էր. մեղ տեսաւ թի չէ՛ շուտ մի
գունտ ու կծիկ վաղեց դըն միր, ու սկսաւ
խարց ու փորձ անել:

— Բարով, բարով. երբ եկեր իք. դճր իք:

Մենք զմէն բան դրսաւ երկնք. ըմբըլա խօ-
սելով խօսելով շատ փողոցներ ընցանք. մօտ-
խրացանք մէկ տան մի ու մտանք մընջ էնոր
բակին, դոր իջանք էնոր տակն քարէ թաւան-
ջէքսներով ու մուծ ու ափախաւար տէղ մի
մտանք: Լստեղ կը կենար մըր ընկեր, ու էնոր
օտէն մըրմըտած տեղ էր:

— Լս գիշեր ինձ մօտ քնէք, վաղ էլ բանե-
լու կը տանեմ ձեզ:

Մենք՝ մէկ քիչ էլ զրուց երինք ու պառ-
կանք:



Դ.

Լէն մէկէլ օր շուտ մի իշարցուց մըզի մըր
ընկեր. արեւու բարակ շող մ'էլ ընցիր էր մըր
օտի նեղ քուլքէն ներս. ևս մէ աղէկ մի իշկի-
ցի օտի չորս բոլորը..... Պատիր քարի ին. տախ-
տը խող էր, ու տան առիքը կը կաթէր, ևս
յիմ միտք բերի մըր գեղն ու մըր անիկ. ևս
յիմ միտք բերի էն խլիսունները՝ որ դուս կ'եղ-
նինք անէն ու դաշտ կերթանք. կը տեսնենք
արեն՝ օր փելփլուն դուս կուտէր մըր գեղի
սարի գլխէն. գըռն՝ օր կ'երեւցուցէր իւր կա-
նաչ թփեր. ձիերն՝ օր ուրախ զուարթ կը
խընձխընձէն զատանէ-զատ, ու կը լսենք մենք ա-
նուշ ճլփրլուն:

Եւ իս, երբ մըր անիկէն դուս կ'ելնինք մենք՝
անուշ ու զով քամի կը ծծենք մենք. մըր սիրտ
կ'ուրախէր. ևս մըր աղբուրն էլ բերի յիմ

միտք, ու մնացս ընցուցի օր ևս ու իմ ճփեր՝
օր մի նստանք էնոր ական վիրե ու էնոր ջրով
զովցուցինք մըր սիրտն. իմ աղէն ջրին իշ-
կէր էր էն օր ու իւր կրես տեսնելով էնոր մէջ
կը ծծղար... միտս բերի..... ի՜նչ, ի՜նչ ասիմ,
զմէն բան միտս բերի...:

Իմ գեր մշակը կտրեց իմ մտածմունք.

—Պէ՛տ, երթանք, աղբէ՛ր, ասաց ինձ. գախն
է օր երթանք:

Պուս ելանք մենք մըր օտից:

Շատ գախ չէր ընցեր. օր տան մի մօտիքս-
ցանք՝ զորնոր կը սուզին: Լնտիկ շատ մշկընկ
կէն, օր կը բանին. իմ ճանչուոր գերը՝ խալի-
փորի մի մօտ տարաւ գետ, օր դիրք մի բռնէր
էր յիր ձեռք ու կայնիր էր մընջ բակին. մենք
քիչ մի խօսանք խէտ էնոր, ու ևս թուերս զըշ-
տեցի օր բանիմ:

Ըմարրա գործի ձեռք զարկինք մենք: Ըմէն
օր արեւը իր մօրէն չէր ելլեր՝ օր գործի կը
գնանք մենք, օրն ի բուն կը բանենք, ու յէմալ
կը բանենք, օր իրիկուններ տաղ տեղ չիր մնար
վիր մըր, ու չենք կրնար լպրտել. բանէն կոր

փրթթինք՝ տուն կ'իգէնք, ու կոտարած-թալ-
ցածի պէս մըր դօշկընէրու վիրէն կ'ընկնինք,
կըքնենք: Ու օղորդ, օր շա՛տ ու շատ կը բա-
նենք ու արուն քրտինք կը մանենք. աման շա՛տ
քիչ բան մ'էր մըր վաստակ:

Վո՞ր մացին իմ տեսած երազներ, օր շուտ
պիտ' զանկրնամ ու տուն դառնամ. ախ, ախ.....:

Պօ, բմլա ընցուցինք մենք մըր օրն ու արև:

Անցան մէկ քանի ամիսներ. ու մէկ քանի
դրուն էլ տեսայ, օր շա՛տ ազան աուն կուգայ
իմ ախբէր, ու քիչ մ'էլ խրմուկ:

—Է՛հ, նեղացիր ա, ոքնջուտայ եղիր ա,
ու կ'եղնի, օր քիչ մի ոյժ ու տաղաթ առնե-
լու հապով մի բան խմիր ա. ես բմնըլա տու-
շումիլ կ'եղնիմ յիս ու յիս, ու բան մի չիմ ա-
սեր եղբօրս: Աման քիչ քիչ տեսայ, օր քանի
կերթայ կ'էվէլցուցնայ իմ ախբէր զիւր խմելն,
ու տուն էլ չգար շա՛տ գախ:

Է՛հ.....է՛հ.....միաք կ'էնիս, օր խելքն էլ տի
թռուցայ օր մի իմ աղբէր. մի անգամ երբ
տուն եկաւ, կանչեցի զինք ու ասացի:

—Ականջ արա, Պետօ, էդ ի՞նչ է քո ա-
րածը:

Չուտայ չետուր էն. ես համոզեցի լամոզե-
ցի զինք, օր թողնի իր չար ճամբախն. ասի
թի՛ խեղճ ու շիվար ենք մենք, ու պէտք է օր
շուտ մի յէտ դառնանք մըր գեղ. թի՛ Աստ-
ծոյ երեսէն ընկածները մենակ կը մոռանան զի-
րենց օլաթ ու թօլաթ, ու կը մնան մընջ օտար
երկրին. թի՛ վոր էսպէս ստակ ցփնենք, չենք
կարողանար հայրենիք դառնալ:

Նս շատ ու շատ էս տեսակ խօսքերով ուզե-
ցի դարձուցել զիմ եղբօր միաք, և աղաչանք
էրի իրեն օր էլ չիմէ:

Իմ աղբէրն օր լսեց զիմ խօսք ու խրատ-
ներ, էլաց ու ուխտ արեց, օր էլ խմելու բան
չառնէ յիւր բերան:

Մէկ քանի օր անցան վըր էսա խօսքերուն,
ու իմ աղբէր չէր խմեր, իր գախին տուն կ'ի-
գէր, իր գախին էլ բանեղու կերթէր:

Նս ուրախացայ յիս ու յիս, ու մտացս էլ
ընուցի թի՛ հուհո՛ւ աղատիր ինք էսա նոր
փոխանքէ:

Մէկ քանի օր էլ ընցան: Օր մի ազընցաւ
կղբայրս, իշկեցի իշկեցի օր դայ, ու չեկաւ.
դախն ընցաւ ու մարդ չերեւար. ես պառկայ.
աման աչքս չէր կպիր. կէս գիշերն ընցեր էր,
ու կը զարնեն դուռ:

Ասեցի օր կը զարնեն դուռ. ելայ, բացի, ու
ի՛նչ տեսնեմ:

Երկու մշկընէր մտիր ին յիմ կղբօր թեւեր
ու ներս կը մանեն: Աղբօրս աչքեր՝ արժն խրո-
նէր ին. մազեր՝ զրգզրզնակ. երես տեսնող կը
զարհուրեր:

Էս հախու կարայ:

— Իմ աղբէր, էլման, էլման.....ասացի, ու
իմ խօսք մընջ բերնիս մնաց:

— Բո ձէն քաշէ՛քէ. թի չէ՛ խօզիդ կառ-
նիմ:

Խզար զօրով-բալով խազիւ կըցանք պառ-
կեցնել զինք:

Էսկից ետք մըր գործեր՝ հուհո՛ւ ծուռ զը-
նացին. քիչ քիչ գինով դարձաւ իմ աղբէր
գիշերներ տուն չեգէր, ու կամ թուղթ կը խո-

զար դուսը, կամ գինի կը խմէր, իր պէս քոռ-
ուծուռ մշկընէրու խեղ:

Էն վաստակն օր կ'էնէր իմ աղբէր, հայրամթ
չէր զեմիր էնոր, օր էսպէս թալէր բանէր, ու
էսօր հապով էլ դոր ձեռքաշուծին սխաւ է-
նել.....:

Գալիս դախ իւր խեւքը տեղ կ'էնէր իրեն,
ու կուլար ու կը հանքըռտար, ու ուխտ կ'էնէր
օր դիր մ'էլ չխմէր, ու մամբէր էր էս տեսակ
կեանքն: Աման մէկ երկու օր չէր անցնէր, ու
էլման կը խմէր, թղթի կը խաղէր, ու ձեռքա-
շուծին կ'էնէր: Վերջ ու վերջ հուհո՛ւ, դող
դարձաւ. շատ միտք էրի, թի՛ ի՞նչ էնիմ, ու
ի՛նչ կարող էի էնել. օրեր էլ խասան վի
մըր:

Իմ կղբօր վերջ շատ գէշ եղաւ: Գիր մի
անէն զնաց ու էլ չեկաւ. իշկեցի օր մը, երկու
օր, երեք օր, ու չտեսայ զէնոր երես. մընջ դա-
զան քաղքի փնտռեցի. փօլիսային խաբար ա-
րեցի, ու էն էլ կը փնտռէր կը փնտռէր՝ ու բան
մի դուս չէր խաննիր. աման օր մի յօրանց օր
իմ բանեկու տեղն խասայ, մշակ մի մօտիւրացաւ.

գրին իս, քունջ մի առաւ զիս տարաւ, ու ուր-մոլոր զլուցներով, ասաց.

— Գիտի՛ս, գտան զքո աղբէր:

Ես ուրախացայ, ու իմ գեր՝ զեւր խօսք վերայ բերելով, ասաց.

— Եւրէկ գտան Սօլլակ սարի վիրև. բալան-դազը սպաներ են:

Ես, թե մի կէր՝ թե մ'էլ առի, վազեցի խասայ յէն սարն՝ օր նշանց հառուր ինձ զիմ գեր.....տեսնե՛մ օր.....ի՛նչ... ասքար մի կեցիր ա տեղ, ու դաս մի մարդիկ առեր ին զեւր չորս բոլոր:

Մօտխըսցայ. տեսայ օր հողին վերէն ընկեր է իմ եղբօր շանդակ: Չարդուկոտոր էրիր ին զիմ աղբէր. զլուխն՝ մէկ տեղ մի ընկեր էր, ձեռներ ու թևեր՝ ուրիշ տեղ մի..... Ենասա-ուած, անբռած ու զփոխոց մարդիկներ.....:

Օրով խեղ իմ եղբօր իմա՛լ սպանուելին էլ իմցայ ես: Օր մի, թղթի խաղցիր ա, ու շատ տարեր. էս բանն օր իմցեր են երկու-ե-րեք խոզի, իրենց մաքեր շորդուր ին, օր խլեն զիմ եղբօր տարուէկ փարէն.....Գինի շատ են

խմցըցիր ու շարխօշ արեր են զէն, դօր տարեր են սարն ու սպաներ:

Բանն օր ըմբըլա եղաւ, յիմ ձեռաց ելաւ իմ աղբէր. ես էլ մացի մենակ մընջ օտար երկրի. իմ յոյսն՝ օր մացեր էր, էն էր օր իմ կնկան ու ճփի ու պփի մօտ ա՛հրթամ մի օր:

Եմբըլա միտք էնելով բանը, միտս զրի, օր շուտ մ'ընկնիմ ի ճամբախ: Գլուխս ծռեցի ու դե ու սատանի պէս կը տատէի ու կը բա-նէի թի՛ գիշեր ու թի՛ ցօրեկ. մէկ բան կար յիմ միտք, ու էն էլ էն էր՝ օր փարա ժողվիմ որ տուն տանիմ.....:

Բէյխուդա տեղն իր՝ օր ես ըմբըլա խողի-խողկալաք կի քաշե.....:

Ե.

Իրիկուն մի՝ օր տուն կուգէի յիմ բանտե-ղէն, մշկու մի րաստ եկայ. կը թուէր թի ճան-չուոր էր էն ինձ. էվէի մօտխըսցայ ու աղէկ իշկելով խասկացայ էսոր զօվ եղնիլն: Մըր գե-

դէն էր էն. անունն էլ Մնո: Աս մօտխորացայ
դըն էն, ու երկուսս էլ ուրախացանք ու բա-
րեւ տուինք իրերաց: Աս Մնոն էն աղեքներուց
էր, օր քիչ կը դանուին իրենց լաւութենի
կողմէ մընջ մեր գեղերուն: Աժդահար, կտրիճ,
խելացի, ուժով, գրող-կարգրող: Բձն աղէկ
բանի տէրն էր:

Մենք ընկանք մընջ խօսք ու զրուցի. առ-
ջի զրուն օր խարցմունք էրի, իմ քուլթըթի
վերայ էր. բան մի չասաց էս կողմէն. ու ինձ
էլ յէմալ երևաց, օր ընցոց-մոռոց արեց էն
զիմ խարցմունք, ու ուրիշ մէ բանի վերէն
խօսք երաց..... Քիչ մի հաք ծոցէն մի գիր հ-
Հան էտուր յիս, ու ասաց, որ քեռիս ճամբիր
ա գէս գիր: Աս գրվոր-կարգրվոր չի. էս Հա-
պով էլ չի կանացի կարգալ շուտ մի զիմ գիր
զիրն օր էտուր յիս Մնոն, կուղէր զասնալ,
խօսք էլ կուտէր, որ մէկէլ օր էլման տեսու-
թին կ'էնինք: Աս չթողի օր դացիր էր, ու էլ-
ման խարցմունք էրի մըր տան ու քուլթըթի
վերայ..... բանի նետեց էնոր, աչքեր գետին կա-
խեց: Աս խասկացայ, օր գէշ բան մի ձեռք

տուիր ա մըր տան, ու էսօր Հապով էլ յէ-
մալ երևցուց Մնոն, օր չսիր զիմ խօսք. բա-
լանգաղ աղէն չիր ուղեր, օր ինք պիտ արունէ
զիմ սիրտ. ինք գիտէր, որ ըմէն բան գրվով
է մընջ իմ գրին: Վիր մ'էլ խօսք բացի վի
մըր տան, ու աղիվրայ իրեն, օր բան մի չպա-
խէ յիմ մօտէն, ու զըմէն բան՝ իմալ օր հղեր
ա, տեղն ի տեղն զրուցէ ինձ:

—Մնչ էնիմ, ինչ էնիմ, ասաց Մնոն, ծանր
ալիս մ'էլ քաշեց յինք, և ասաց ինձ օր ականջ
դնեմ իրեն:

—Վու գիտիս, օր երբ դու ու քո աղբեր
կլաք մըր գեղէն, քո կնիկ և զաւկներ նստան
քո քեռու տուն: Քո կնիկ շատ մալուլիւ էր,
օր դու զատն ես իւր մօտէն, ու զըսա կ'էնէր
թի՛ իր միտք իրեն կ'ասէ, օր զիր մ'էլ չտես-
նիր քեզ. մենք ըմէնքս էլ խրատ կուտինք ի-
րեն, սիրտ կուտինք, օր դու շուտ մի յետ կը
դառնաս, փարա կը բերես, ու նոր ումր ու նոր
օր ու արե կ'անցընէք: Աման քո կնիկ չէր աւ-
տար, ու մալուլ մալուլ գլուխը կը ժժնէր ու
կոտէր. «չէ, չէ»..... Օրեր ու շաբթրներ ըն-

ցան.....քեռին օր իր տուն տարեր իր քո քուլ-
ֆաթն, իրարու վերայ մօտասաց գեղ կ'երթէր,
ու օր մի, երկու օր յէնտեղ կը մնէր, տունն էլ
կը մնէն իւր պառաւ կնիկ, քո կնիկ ու աղէն:

Քո քեռին, գիտիս, օր զանգրնի անուն ու-
նէր մընջ մըր գեղին, ու թուի թի՛ յէմալ չէ
օր ընկիր ի յուրիշներու բերան:

Եւ ձէնն օր լուան մըր տրկից քրդեր, թի
զանգին ա քո քեռին, ու օր էլ կեղնի օր տուն
չգտնուիր, խօսք արին, օր թախն քո քեռու
տուն:

Գիշեր մի գեղ գնաց քո քեռին, (և հնպէս
քէսաւ օր, էս դրուն ես էլ գացի խեւ քո քե-
ռուն, եթէ մընջ գեղին եղնէի ես, չեմ աւտար
օր էս բան ձեռք տար քո քեռու տան):

Քրդեր իմցան, օր էն գիշեր տուն չէ քո
քեռին, ու էն գիշեր կտրեցին զքո քեռու տան
պատ ու մտան ներս. անեցիք պոռացին, ճշա-
ցին, գուան ու տրկիցն էլ լսեց ու իմցաւ զը-
մէն բան, աման չգնաց գէնոր յաւար, ու ը-
մէնքն էլ քօռ կատվի պէս մտան իրենց տան
զրմբկըներու տակ: Եւ Աստուած, երբ ա'եղնի

օր էս մարդիկն էլ բժամթին վրո իրենց, օր
մարդ ին, ու գողութին ու տաւրութին մար-
դու շարթ չէ:

Բմըրա աղբէր, մէկն էլ յաւար չի գացեր
քո քեռու տուն. գողերն էլ մընջ մէկ մընջ
երկու քո աղէն սպանեցին օր ձէն չխանէ, ու
էնոր օտնէն բռնելով զարկին պոստուիր դէ-
նոր գլուխ:

Քոր դարձան զարկին թվրիթիթիթի զար-
կին պառվու գլխուն, ու էլման աղէկ օր չմե-
ռաւ: Եւ առ ու շատ զօռ ու տալապ անիլէն
վերջ՝ քո կնկան ըողին էլ դպան, ու էլ ըմէն
բաներ ընելէն ետք, տան եղած չեղածներն էլ
ժողովեցին ու տարան..... Երբ էնոնք գացին,
կիսամեռ վազեց տրկիցներուն զրուցեց քո կին
զըմէն ընցած դարձածը, ու հնգախ ու հնձախ
հնգախ մէնակ սէյր էրիր ին մըր ապրասի երեւ
տրկիցներ ու գացիր ին տուն. պառաւը խոգե-
տարք էրիր ին, արընթաթախ սպանուկ աղէն
էլ լուացեր ին:

Եւ օրէն ետք քո կնիկ Հալաւ ու մաշաւ
մէկ եկէս ամիս վերջն էլ մեռաւ օրտին ցաւէն:

— Ըստ, էսպէս, իմ անուշ տղեքներ, վերայ բերաւ խալիվորն, ու էսա խաբրներ տուաւ ինձ մըր Մ'նոն, ու խորունկ մի ան քաշեց:

Մարդու լեզուն չգառնար ու չկանար զրուցել իմ քաշած չարչարանքներ:

Եսպէս ես մացի մենակ ու լղլար իմ գըլ՝ խուն մընջ էս աշխարհին.....քանի՛ քանի՛ դըրուն մտացս անցուցի օր սպաննամ զիս, գեանքնինիմ, աման սատանէն գէմ կը գնէր ինձ:

Են օրից օր Մ'նօի պատմութիւն լսեցի, ես էլ շրորգոայ, ու ես էլ ընկայ մընջ աշխարհին օր յէն զի, գէս ու գէն ու խեղճութենի: Շատ տեղեր, գեղեր, քաղքերներ գացի, տեսայ, ու օրն ու արեւս փճացրի. էս օրուան օրն էլ ձիւնի պէս սպիտակեր ին իմ մազեր: Երբ տեսայ օր մեռնելու օրը վերայ կը խսանի, միտս փոխեցի, օր ես վօթան գամ. էն էլ քառասուն տարի ետք: Ես չէի ուզեր օր մընջ օտար հողին թաղին զիմ ոսկրներն, հապա իմ խօր ու պապիէ երկիրը, ու էլման մընջ խօրենական երկրին, ու մընջ իմ տան ու տրիւնին:

Սկա քիչ մի ռաթիր է խողիս, օր կը տես

նեմ իմ սարեր, իմ ձորեր, իմ դրոններ. միտքս կը բերեմ իմ կնիկ ու տղէն, իմ աղբէր ու խէր, ու կամ սե ու սեւավուր ումր, ու աստվորի մէջ քիչ մի կը ռաթի սիրտս

Չէ՛, տղեքներ, չէ՛. Եստուած զատ ու զատն պախէ ձեզի օտար երկիր երթալէ. խարիր խաղար դրուն աղէկ ա՛ օր մեռնինք մընջ մըր խօրենական խողին ու ջըին, ու չերթանք բնկնինք օտար տուն ու դուռ, ու երեսի վերայ թողնենք մըր պապիկենական ոսկրներ:

Խալիվոր Մ'կրօն թմեց զիւր պատմութիւն. ըմէնի աչեր թացոտիր ին, ու կաթ-կաթ արտասուք կը զլորին. իւր երեսէն էլ առատ առատ զոգ կը թափէր :

Գեղի ջէլ ու ջիւհան տղեքներ՝ անձէն անձուն կամաց մի ելան իրենց տեղերէն ու մի ժամթելով իրենց աները գացին:

Ազրնցաւ: Ուշացաւ:
 Ամբեմ պալ: Ահագին ժայռ:
 Անրում: Անդուծ:
 Ափախաւար: Աղջամղջին:
 Բալանդազ: Խեղճ:
 Բաթախ: Տղմուտ, (չամուռ):
 Բժամթիւ: Մամտալ:
 Բխո: Նոյն ինքն:
 Գախ: Ժամանակ:
 Գեր: Ընկեր:
 Գըմբիլներու տակ: Սպերաններու տակ:
 Գողութին, տաւալութին:
 Գղերգութիւն:
 Գիր, զրուն: Անգամ:
 Գրոն: Անտառ:
 Օլթ ու թօլթ: Տուն տեղ:
 Օսանէ զատ: Հեռի:

Լշման բաս էր: Նորէն ձեռնտու էր:
 Լս զրուն: Այս անգամ:
 Լմարէ մի քէլէլ: Այսչափ ճամբորդերն:
 Թարանջա: Սանդուխ:
 Իշարցուց: Երթնցուց:
 Խողի-խողկվարք կը քաշի:
 Նըճքելով: Քաշելով, ծծելով:
 Անինձկաւ: Նեղարտութիւն:
 Ար ժըմէր: Արեւցնէր:
 Ար ծիրէր: Արկննար:
 Ար ճէվայ: Ար կաթկըթի:
 Ար մշմրէր: Թող տալ մօռնալ:
 Հաճու: Յակամայս:
 Հանքըռտալ: Աղիողորմ կերպիւ լալ:
 Զեռքաշութին: Գողութիւն:
 Դլաւ: Գիր:
 Դըսէ ընկէ: Պատմէ,
 Մալուլ: Տխուր:
 Մախ: Մահ:
 Մօտխաս: Մօտիկ:
 Յենդախ: Ան տուն:

Շարթ:	Պայման:
Շրորշարունցին:	Պլնէ հանել:
Չքէսի անոնց:	Չհանդիպի անոնց:
Չէր ղէմիր:	Չէր բաւեր:
Պաշարօշ:	Անգործ:
Ջէլ ու ջիւհան:	Երիտասարդ:
Ջիւս:	Երբէն:
Ռընջուտար:	Պարտաստել:
Սուն չին տար իրենց	Ոտի վրայ չին կրնար
գաւախն:	կենալ:
Տաղաթ:	Սարողութիւն:
Յփնենք:	Յանենք, մտնենք:
Քո մուր քո գլուխ:	Քո գիտնալէքն է:
Քուլար:	Պատուհան:
Օղորթմա:	Երաւ:



1. *Agave*
2. *Agave*
3. *Agave*
4. *Agave*
5. *Agave*
6. *Agave*
7. *Agave*
8. *Agave*
9. *Agave*
10. *Agave*
11. *Agave*
12. *Agave*
13. *Agave*
14. *Agave*
15. *Agave*
16. *Agave*
17. *Agave*
18. *Agave*
19. *Agave*
20. *Agave*
21. *Agave*
22. *Agave*
23. *Agave*
24. *Agave*
25. *Agave*
26. *Agave*
27. *Agave*
28. *Agave*
29. *Agave*
30. *Agave*
31. *Agave*
32. *Agave*
33. *Agave*
34. *Agave*
35. *Agave*
36. *Agave*
37. *Agave*
38. *Agave*
39. *Agave*
40. *Agave*
41. *Agave*
42. *Agave*
43. *Agave*
44. *Agave*
45. *Agave*
46. *Agave*
47. *Agave*
48. *Agave*
49. *Agave*
50. *Agave*
51. *Agave*
52. *Agave*
53. *Agave*
54. *Agave*
55. *Agave*
56. *Agave*
57. *Agave*
58. *Agave*
59. *Agave*
60. *Agave*
61. *Agave*
62. *Agave*
63. *Agave*
64. *Agave*
65. *Agave*
66. *Agave*
67. *Agave*
68. *Agave*
69. *Agave*
70. *Agave*
71. *Agave*
72. *Agave*
73. *Agave*
74. *Agave*
75. *Agave*
76. *Agave*
77. *Agave*
78. *Agave*
79. *Agave*
80. *Agave*
81. *Agave*
82. *Agave*
83. *Agave*
84. *Agave*
85. *Agave*
86. *Agave*
87. *Agave*
88. *Agave*
89. *Agave*
90. *Agave*
91. *Agave*
92. *Agave*
93. *Agave*
94. *Agave*
95. *Agave*
96. *Agave*
97. *Agave*
98. *Agave*
99. *Agave*
100. *Agave*

ԳԻՆՆ Է

Ուրիշի գերեզմանի վրայ առանց արտա-

սուքի են լաց լինում.	5	կ.
Բուլղար աւաղակապետ	5	»
Ժաննա տ'Արք. Վաղղիայի աղատող . .	3	»
Նեղա (Տատիս պատմածը).	5	»
Ղօնչօ (Բուլղար աւաղակապետի պատմածը).	5	»
Ս իւհէլմ Տէլլ	5	»
Վաղթական	3	»

ԳԻՆՆ Է 3 ԿՈՊ. (կամ 10 փարա):

ՀՀ Ազգային գրադարան



NL0246436